



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՍՍՌՄ-Ի ՀԵՏ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ ԱԼԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մայիսի 15-ին Երևան ժամանեց ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Ալբանական ընկերության ղեկավարի Ալբանիայի ժողովրդական Ռեսպուբլիկայի էկոնոմիկայի մինիստր և ընկերության վարչության նախագահ պ-ն Նակո Սպիրուի գլխավորությամբ:

Դեկլարացիան բաղկացած էր ընկերության հետևյալ անդամներից. — մինիստր առանց պորտֆելի Հաջի Լեշի, Ալբանիայի ժողովրդական Ռեսպուբլիկայի պրեմյեր-մինիստրի կինը, ալբանացի կանանց հակաֆաշիստական կոմիտեի նախագահ Նեջմին Խոջա, ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Ալբանական ընկերության գլխավոր քարտուղար Զոֆալին Լյուկա և Ալբանիայի կոմերիտմիության Կենտրոնական կոմիտեի անդամ Վերա Պոլյանին: Կայարանում հյուրերին դիմավորեցին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության նախագահ պաշտոնակատար Զ. Բաշինջադյանը, ՀՍՍՌ լուսավորության մինիստր Գ. Աղբալյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Մ. Գրիգորյանը և արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության պատասխանատու աշխատակիցները:

Երևանում գտնվելու ժամանակ հյուրերը դիտեցին քաղաքը և ծանոթացան նրա տեսարժան վայրերին:

Մայիսի 16-ին ղեկավարի պատվին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունում կազմակերպվեց ընդունելություն, որտեղ ներկա էին Սովետական Հայաստանի կուլտուրայի ափսոսալի գործիչները:

Մայիսի 17-ին հյուրերը մեկնեցին Մոսկվա:

Մեկնելուց առաջ ղեկավարի ղեկավար պ-ն Սպիրուն Հայկական Հեռագրական Գործակալության ներկայացուցչի հետ ունեցած զրույցում հայտարարեց հետևյալը. —

— ՍՍՌՄ-ում գտնված ժամանակամիջոցում մեր ղեկավարի այցելեց Մոսկվան, Լենինգրադը, Քբիլիսին և Երևանը: Ամենուրեք, որտեղ միայն մեր ղեկավարի եղել է, նա զգացել է սովետական մարդկանց կողմից մեծ ուշադրություն և եղբայրական ջերմ վերաբերմունք: Բարեկամական այդ զգացմունքները մենք լիովին վերագրում ենք ալբանական ժողովրդին, գերմանա-խալապական ֆաշիստական հարստահարիչների դեմ մղված պայքարում նրա ցուցաբերած հերոսությանը և անձնուրացությանը: Դեկլարացիայի կողմից Սովետական Հայաստանում անցկացված մի քանի օրը մեզ վրա թողել են անջնջելի տպավորություն: Մենք դիտեցինք Երևանը, ծանոթացանք մի շարք ձեռնարկությունների աշխատանքի հետ, այցելեցինք բազմաթիվ գիտական հիմնարկություններ, զրույց ունեցանք գիտության և արվեստի ներկայացուցիչների, մասնավորապես Սովետական Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի հետ, Հայէնբերգոյի կառավարիչ Գ. Փերիխանյանի հետ, դիտեցինք ձեր հիանալի պատկերասրահը և այլն:

Մեր տեսածն ու իմացածը գերազանցեցին մեր բոլոր սպասելիքները:

Հայէնբերգոյում մեզ ծանոթացրին Սևանի կնակադի շինարարության վիթխարի պլանի հետ: Մենք համոզվեցինք, որ այդ պլանը հաջողությամբ իրագործվում է և որ հիդրոկայանների Սևանի սիստեմը Հայաստանին թույլ կտա շատ էժան էներգիայի հիման

վրա էլ ավելի արագորեն առաջ մղել և բազմակողմանիորեն զարգացնել իր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Հսկայական են հայ ժողովրդի հաջողությունները կուլտուրայի բնագավառում: Մենք ծանոթացանք Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի աշխատանքներին, որտեղ հարյուրավոր գիտնականներ անխոնջ կերպով աշխատում են իրենց երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման պրոբլեմների վրա:

Օպերային թատրոնում մեր դելեգացիան լսեց հայկական հիմնալի երաժշտության համերգ, որը մեզ մեծ բավականություն պատճառեց: Հայկական երաժշտությունը չափազանց մեկտղիկ է և արտահայտիչ: Առհասարակ երաժշտական կուլտուրան, ինչպես նաև գեղանկարչությունը, ձեռնում դառնվում է բարձր մակարդակի վրա:

Հայ ժողովուրդը մեծ հաջողություններ է ձեռք բերել էկոնոմիկայի և կուլտուրայի բոլոր բնագավառներում շնորհիվ սովետական իշխանության, որը բազմաշարժար հայ ժողովրդին ապահովել է բարգավաճման և երջանիկ կյանքի պայմաններ: Չեք ռեսպոնդենտի օրինակը մեծ նշանակություն ունի աշխարհի փոքր ժողովուրդների համար:

Մենք մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ ծանոթացանք ՍՍՌՄ-ի սահմաններից դուրս ապրող հայերի հայրենիք վերա-

դառնալու խնդիրներին: Սակավաթիվ հայ ժողովուրդը, ինչպես և ալբանական ժողովուրդը, մեծ տառապանքներ է կրել օտարերկրյա հարստահարիչների կողմից: Ես գիտեմ, որ համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ և դրանից էլ դեռ շատ առաջ թյուրքերը կոտորել են ավելի քան մեկ միլիոն հայ և ողջ մնացած հայերը ստիպված են եղել փախչել թյուրքիայից, լքել իրենց հարազատ երկիրը և թափառել օտար երկրներում: Այժմ սովետական իշխանությունը նրանց հնարավորություն է տալիս վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան: Ես տեսակցվի ու զրուցել եմ շատ հայրենադարձ հայերի հետ նրանց աշխատանքի վայրում: Նրանք հրճվանքի մեջ են իրենց սովետական հայրենիքից և աշխատում են խանդավառությամբ:

Դժբախտաբար հարյուր հազարավոր հայեր դեռևս թափառում են օտարության մեջ և հնարավորություն չունեն վերադառնալու թյուրքիայի կողմից զավթված ի բն հայկական հողերը: Ահա թե ինչու միանգամայն օրինական է ամբողջ աշխարհի հայության ցանկությունը՝ տեսնել այդ հողերը վերամիավորված Սովետական Հայաստանին:

Վերջում պ-րն Սպիրոն ջերմ ցանկություն հայտնեց, որպեսզի էլ ավելի ամրապնդվեն կուլտուրական կապերը Ալբանիայի և Սովետական Միության, մասնավորապես Սովետական Հայաստանի հետ:

